

ԴԱՍ 15. ԳԼՈՒԽ 10-11 — ՓՈՔՐԻԿ ԳՐՔՈՒՅԿԸ, ՏԱՃԱՐԸ և ԵՐԿՈՒ ՎԿԱՆԵՐԸ

Գլուխ 10. «փոքրիկ գիրքը» և յոթ որոտումները:

Գլուխ 11. Տաճարը և երկու վկաները:

Հայտնություն 10

Փոքրիկ գրքույկը

- Անուղղակի (10-14 գլուխներ)
 - 7-րդ փոդով սկսվում են բարկության թասերը
- Զորավոր հրեշտակը «Փոքրիկ գրքույկով».
 - Գրքի կնիքները հիմա քանդված են.
 - Գրված «ներսից և դրսից»
 - Դու պետք է նորից մարգարեություն անես...»
- Յոթ որոտներն իրենց ձայնով խոսեցին.
 - Հովհաննեսը պատրաստ էր գրել, բայց արգելվեց:

1) Եվ տեսա մի **ուրիշ** զորավոր հրեշտակ, որ երկնքից իջնում էր ու ամպ էր հագել, և նրա գլխի վրա ծիածան կար, ու նրա երեսն արևի նման էր, նրա ոտքերը՝ կրակե սյուների պես:

Քրիստոսը

- Ամպեր (Ել. 16:10, 19:9, 24:15, 34:5, Սաղմ. 104:3, Մաթ. 17, Ղուկ. 21:27, Գործք. 1:9, Հայտ. 1:7)
- Ծիածան (Սաղմ. 89:1,8,33-37, Հայտ. 4:3)
- Արև (Հայտ. 1:16, Մաթ. 17)
- Ոտքեր (Հայտ. 1:15)
- Առյուծ (հ. 3), Հոբ 4:9-10, Ես. 31:4-5, Ովս. 5:14, 11:10, Ամովս 3:8, Հայտ. 5:5
- Հիսուսը ՀԿ-ում հաճախ հայտնվել է որպես «Տիրոջ հրեշտակ» (Ել. 3:2, Դատ. 2:4, 6:11-12, 21-22, Բ Թագ. 24:16)

Երկու հիմնական պատճառ որ սա Հիսուս չէ.

- Տեքստը ասում է, որ ինքը «այլ» հրեշտակ է: Հունարեն «Այլ» բառը ունի երկու բացատրություն: Մեկը **heteros** է, այսինքն՝ ոչ նույն բնույթից, ձեւից և ընդհանրապես տարբեր: Խոսքն օգտագործվում է այստեղ **allos**, որը ինչպես նշված է վերելում, նշանակում է մեկ այլ նույն տեսակից. (Հայ. 7:2 Եւ փո ուրիշ հրեշտակ տեսա, Հայ. 8:3, Հայ. 10:1, Հայ. 14:6, 8, 15, 17, 18, Հայ.18:1):
- Տեքստը ասում է որ այս հրեշտակը իջնում է երկնքից եւ կանգնում է երկրի վրա: Մենք գիտենք որ դա չի կարող լինել Հիսուսը, քանի որ Աստվածաշունչը չիսովորեցնում այն մասին որ Հիսուսը ոտքը դնելու է երկրի վրա նախքան իր երկրորդ գալուստը, հատկապես մեծ նեղությունների շրջանում:

Ծննդ. 18:1-2 - 1 Եւ **Եհովան** երևաց նորան Մամբրէի կաղնիների մէջ: Եւ նա նստել էր օրուա տաք ժամանակ վրանի դրանը. 2 Եւ իր աչքերը վեր բարձրացրեց եւ մտիկ տուաւ. Եւ ահա երեք **մարդիկ** կանգնել էին իր մօտ, եւ երբոր տեսաւ՝ վրանի դռնից վազեց նորանց առաջ, եւ մինչև երկիրը խոնարհություն արաւ:

22 Եւ այն **մարդիկ** այնտեղից դուրս եկան դէպի Սողոմ գնացին. Եւ Աբրահամը տակավին կանգնած էր Եհովայի առաջին:

Ծննդ. 19:1 - 1 Եւ այն երկու **հրեշտակներն** իրիկունը Սողոմ եկան. Եւ Ղովտը նստած էր Սողոմի դրանը. Եւ Ղովտը տեսաւ եւ վեր կացաւ գնաց նորանց առաջը եւ իր երեսի վրա մինչև երկիրը խոնարհվեց.

24 Եւ Եհովան Սողոմի եւ Գոմորի վրա ծծումբ եւ կրակ տեղաց Եհովայի կողմից երկնքից...

Ամեն դեպքում նա հայտնվում է որպես Աստծո գահի իշխանությունը կրող: «Ուրիշ». allos, ոչ թե heteros: Գաբրիել = «Աստծո գորությունը»: Միքայել. «Ո՞վ է նման Աստծուն» (միայն հրեշտակապե՞տ. Դանիել 10:13, 12:1, Հուդա 9):

2) Եվ նրա ձեռքին փո բացված գրքույկ կար. ու իր աջ ոտքը դրեց ծովի վրա ու ձախը՝ ցամաքի վրա: 3) Եվ բարձրաձայն աղաղակեց, ինչպես առյուծն է մռնչում, ու երբ աղաղակեց, յոթ որոտներ իրենց ձայներով խոսեցին:

«**Առյուծի մռնչյուն**». Առ. 19:12, Հովել 3:16: (Երբ Հայրը խոսեց Հիսուսի հետ երկրի վրա, «Ժողովորդը, որ կանգնած էր և լսեց դա, ասում էր. «Որոտմունք եղավ» (Հովհ. 12:28-29):

4) Երբ **յոթ որոտները խոսեցին**, պիտի գրեի, բայց երկնքից **մի ձայն լսեցի**, որ ասում էր ինձ. «Կնքի՛ր այն ամենը, որ յոթ որոտներն ասացին, և դրանց մի՛ գրիր»: 5) Եվ այն հրեշտակը, որին ծովի ու ցամաքի վրա կանգնած տեսա, իր ձեռքը բարձրացրեց երկինք: 6) Ու երդվեց Նրանով, որ հավիտյանս հավիտենից ապրում է, որ ստեղծեց երկինքն ու այն ամենը, որ նրա մեջ կա, և երկիրն ու այն ամենը, ինչ նրա մեջ, և ծովն ու այն ամենը, ինչ կա նրա մեջ, թե այլևս ժամանակ չի լինելու:

Կնքիր և դրանց մի գրիր: 2 Օր. 29:29 - 29 Ծածուկ բաները մեր Եհովա Աստուծո համար է, բայց հայտնված բաները մեզ եւ մեր որդիների համար հավիտյան, որ այս օրէնքի ամեն խօսքերը կատարենք:

(Ահա թե ինչու շատերն այս «գորավոր հրեշտակին» չեն տեսնում որպէս Քրիստոս):

Աստված Իրեն դրեց երդումի տակ, երբ ուխտ կնքեց Աբրահամի հետ (Եբր. 6:13-20), երբ Իր Որդուն հոշակեց քահանայապետ (Եբր. 7:20-22) և երբ խոստացավ Դավթին, որ Քրիստոսն իր սերնդից կլինի (Գործք. 2:29-30):

«**Ուշացում**» այլևս չի լինի: Նա ուշացրել է Իր դատաստանները, որպէսզի կորսված մեղավորները ժամանակ ունենան ապաշխարելու (Բ Պետ. 3:1-9): Ժամանակը վերջացել է: Նահատակված սրբերի աղոթքները (Հայտ. 6:10-11) մոտ են կատարվելու:

7) Այլ յոթերորդ հրեշտակի ձայնի օրերին, երբ նա փողը հնչեցնի, կկատարվի (should be finished), Աստծո խորհուրդը (mystery), ինչպէս հայտարարել էր Իր ծառաներին՝ մարգարէներին:

Ի՞նչ խորհուրդ (mystery): Աշխարհում չարիքի խնդիրը:

Չարությանը թույլ է տրվել աճել մինչև աշխարհը կհնձվի դատաստանի համար (Բ Թեսաղ. 2:7, Հայտ. 14:14-20): Գինը վճարված է: Կարող է անակնակալ լինել իմանալը, որ Աստված երբևէ չի թագավորել երկրի վրա: Իրականում, Նա ինքնիշխան Թագավոր է ողջ տիեզերքի վրա՝ թե՛ երկնքի, թե՛ երկրի: Նա իշխել է, տիրել ու միջամտել երկրի վրա: Նրա կառավարումը թվում է հեռակա և ողջ ամբողջական: Նա երբևէ չի օգտագործել Իր բացարձակ իշխանությունը՝ ավարտին հասցնելու դիվային գորությունը, մարդկային ըմբոստությունը և համաշխարհային անարդարությունն ու տառապանքը: Նա նաև չի ստանում այն պաշտամունքն ու պատիվը, որին արժանի է: Այդ բոլորը շատ մոտ է փոխվելու: Հենց այդ մասին ենք մենք խնդրում, երբ աղոթում ենք. «Քո թագավորությունը գա, Քո կամքը լինի, ինչպէս երկնքում է, այնպէս երկրի վրա»: Այս թագավորության հաստատումը տեղի կունենա Հայտ. 11:17-ում:

«Խորհուրդ» (mystery)

- Երկնքի արքայության. Մաթ. 13:11
- Արքայության. Մարկ. 4:11
- Իսրայելի կուրության. Հռոմ. 11:25

- Հափշտակության. Ա Կորն. 15:51
- Նրա կամքի. Եփ. 1:9
- Քրիստոսի և Նրա Եկեղեցու. Եփ. 5:32
- Ավետարանի. Եփ. 3:4, Կող. 1:26-27, 4:3
- Անօրենության. Բ Թեսաղ. 2:7
- Աստծո և Քրիստոսի. Կող. 2:2
- Երկրի. Ա Տիմ. 3:9
- Աստվածպաշտության. Ա Տիմ. 3:16
- Յոթ աստղերի և ոսկե աշտանակների. Հայտ. 1:20
- Մեծ Բաբելոնի. Հայտ. 17:5
- Պոռնիկի. Հայտ. 17:7

8) **Եվ այն ձայնը, որ երկնքից լսեցի**, նորից խոսեց ինձ հետ ու ասաց. «Գնա՛, վերցրո՛ւ այն բաց գրքույկը, որ ծովի ու ցամաքի վրա կանգնած **հրեշտակի ձեռքին է**»: 9) Ես էլ գնացի հրեշտակի մոտ ու ասացի նրան. «Տու՛ր ինձ այն գրքույկը»: Իսկ նա ինձ ասաց. «Վերցրո՛ւ սա և **կենր**, և փորիդ մեջ դառնություն է առաջացնելու, բայց բերանիդ մեջ լինելու է մեղրի պես անուշ»:

- Աստծո Խոսքը հաճախ համեմատվում է սնունդի հետ. հաց (Մաթ. 4:4), կաթ (Ա Պետ. 2:2), միս (Ա Կորն. 3:1-2), մեղր (Մամ. 119:10)
- **Մարսելն էական է**: Տեսնել, վերցնել, իմանալ... բավարար չէ: Միայն այն բանից հետո, երբ Հովհաննեսը «մարսեց» գիրքը, կարողացավ «նորից մարգարեանալ»:

10) Եվ գրքույկը վերցրի հրեշտակի ձեռքից ու կերա, և իմ բերանում մեղրի պես անուշ էր և ուտելուց հետո փորիս մեջ դառնություն առաջացավ: 11) Ու ինձ ասաց. «**Դու նորից պիտի մարգարեություն անես** շատ ժողովուրդների և ազգերի ու լեզուների և թագավորների առաջ»:

Եր. 15:16 և Եզեկ. 2:9-3:4: Մարդու ունայնության իրականությունը դառն է:

Այն, ինչ մենք անվանում ենք նվաճում և քաղաքակրթություն, երևում է որպես ապստամբություն և աստվածուրացություն, որ աղաղակում է Աստծուն դատաստանի համար:

Հայտնություն 11

Տաճարը և երկու վկաները

11-14 գլուխներում մենք որոշ բաներ ավելի ընդարձակ կնայենք: Նկատեք, որ հրեաների և հեթանոսների միջև առանձնությունը նորից է կրկնվում, ներկայացնելով ՀԿ-ում Աստծո մտահղացումը: Այս գլուխը սկսվում է երկրի վրա, սակայն ավարտվում է երկնքում:

(Գրքի կենտրոնական մասն է): 11-14 գլուխներն անուղղակի են (parenthetical): 7-րդ փողը ցույց կտա Աստծո բարկության կատարումը (15:1):

1) Եվ ինձ գավազանի նման մի **եղեգ** տրվեց, հրեշտակը կանգնել էր ու ասում էր. «Ելի՛ր ու չափի՛ր Աստծո տաճարը ու զոհասեղանը և այնտեղ պաշտամունք անողներին»: 2) «Իսկ գավիթը, որ տաճարի դրսում է, **դու՛րս թող**, մի՛ չափիր, քանի որ այն հեթանոսներին է տրված, ու նրանք սուրբ քաղաքը ոտնատակ են անելու **քառասուներկու ամիս**»:

Այս չափերը հավասարազոր է այն պահանջելուն: Տաճարի վերակառուցումը պահանջում է, որ այս համարն իրականանա: Տաճար. naos. սուրբ վայր (համեմատած heiron-ի, որ տաճարն է ամբողջական իմաստով):

Չափելու եղեգ. Չափելը ցույց է տալիս դատաստանի նախաբանը (Եր. 31:38-39, Չաք. 2): Դատաստանը սկսվում է Աստծո տնից: Եզեկ. 40:2-ու և Չաք. 2:1,2-ում չափելը ցույց է տալիս նախապատրաստություն, որ Տերը գալիս է թագավորելու երկրի վրա:

«**Դուրս թող**». ekbale. դուրս գցել, դուրս շարտել: Հեթանոսները տիրում են Երուսաղեմին: Ղուկ. 21:24 (մինչև Չաք. 14:3-4):

«**Սուրբ քաղաքը**». ուրիշ ոչ մեկն այսպես չի կոչվում (Նեեմ. 11:1,18, Ես. 52:1, Դան. 9:24, Մաթ. 4:5, 27:52,53):

Դան. 9:27 - 27 Եւ նա պիտի զօրացնէ ուխտը շատերի համար մէկ եօթնեակ, եւ եօթնեակի կէսին պիտի դադարեցնէ զոհը եւ պատարագը. Եւ տաճարի ծայրի վրա ավերածի պղծությունը կլինի մինչեւ որ վերջնական եւ նախասահմանյալ պատուհասը կթափվի ավերածի վրա:

Դան. 12:11-12 - 11 Մշտնջենական զոհը վերացնելու եւ ավերածի պղծությունը դնելու ժամանակից հետո հազար երկու հարյուր իննսուն օր է:
12 Երանի նորան որ կսպասէ եւ կհասնէ հազար երեք հարյուր երեսունհինգ օրուան:

2 Թես. 2:3-4 - 3 Մէկը չ'իսաբէ ձեզ ոչ մի կերպով. որովհետեւ նա չի գա եթէ առաջ չ'գա ապստամբությունը, եւ հայտնվի անօրէնության մարդը՝ կորուստի որդին, ⁴ Այն հակառակորդը որ գորոզացած է այն ամենի վրա, որ Աստուած կամ Աստուծո պաշտօնէա է անուանուած. մինչեւ որ նա Աստուծո տաճարի մէջ (իբրեւ Աստուած) նստի, եւ իր անձը ցույց տա թէ Աստուած է:

Կես շաբաթվա նշանակությունը

Սա Աստվածաշնչի ամենաքննարկված թեման է և ավելի հստակ նշվում է բառացի մեկնաբանությամբ, դրանով սահամափակելով երկրի ապագա դատաստանի ժամանակը, որը նախորդելու է Հազարամյակին: (Դանիել 9:25-ի 69 շաբաթների բառացի կատարումը 70-րդ շաբաթվա 7-ամյա տևողության բառացիության երաշխիքն է):

- Տարիների (70-րդ) շաբաթվա կեսը. Դան. 9:27, Հայտ. 12:14
- 1260 օր (1-ին կէ՞սը). Հայտ. 11:3, 12:6
- 42 ամիսներ , (2-րդ կէ՞սը). Հայտ. 11:2, 13:5
- Ժամանակ, ժամանակներ, ժամանակների բաժանում (2-րդ կէ՞սը). Դան. 7:25, 12:7, Հայտ. 12:14

Տաճարի վերակառուցումը

Հիսուսը. Մաթ. 24:15


Պողոսը. Բ Թեսաղ. 2:4

Հովհաննէս. Հայտ. 11:1,2

Աստծո տաճարը

- Խորանը
- Սողոմոնի տաճարը
- Զորաբաբելի տաճարը
- Հերովդեսի տաճարը («2-րդ տաճարը»)
- «3-րդ» տաճարը
- Հազարամյակի տաճարը
- Երկինք

Ժայռի տաճարի երեք հավանական տարբերակներ



Հյուսիսային վարկած

Ավանդական տեսակետ

Հարավային վարկած

Ավանդական տեսակետ

Ավանդաբար համարվում է, որ տաճարը տեղակայված է եղել այն բլրի վրա, որտեղ հիմա մուսուլմանական տաճարն է: Շատ փորձագետներ այսօր կասկածում են այս վայրի վերաբերյալ, կարծում են, որ այն կամ ավելի հյուսիս կամ ավելի հարավ է ավանդական վայրից:

Հյուսիսային վարկած

Հյուսիսային վարկածն առաջ է քաշվում Դր. Աշեր Կոֆմանի կողմից (նրա գիրքը լույս է տեսել երբայերեն, բացառությամբ երախտագիտության էջից, որը նվիրված է Չաք Միսլերին, որպես իր հետազոտությունների հովանավորի):

Այն հիմնված է Ոսկե (Shushan) դարպասի հետ հավասարեցնելու, որոշակի ուսումնասիրությունների և այլ, վրա: Նա հավատում է, որ Սրբությունների սրբության և Ուխտի տապանակի իրական վայրը Ուխտի տախտակների տաճարի վայրն է (որ հայտնի է նաև որպես Հոգիների տաճար): Նշում. այս կարծիքը ենթադրում է, որ Ժայռի տաճարն իրականում Դրսի գավթում է (հեթանոսների գավթում), և սա հատկապես հետաքրքիր է Հայտ. 11:1,2-ի լույսի ներքո:




Եգ. 44:1-3 ¹ Եւ ինձ ետ դարձրեց դրսի սրբարանի դռան ճանապարհը, որ նայում է դէպի արեւելք. Եւ նա կղպուած էր: ² Եւ Տէրն ասեց ինձ. Այս դուրը կղպուած պիտի մնա. Չպիտի բացուի, նորանով պիտի չմտնեն, որովհետեւ Իսրայէլի Տէր Աստուածը մտավ նորանով. ուրեմն կղպուած պիտի մնա:

Չաք. 14:4-5 ⁴ Եւ նորա ոտները կանգնած կլինեն այն օրը Ձիթենեաց սարի վերա, որ Երուսաղէմի առաջն է դէպի արեւելք, եւ կպատառուի Ձիթենեաց սարը միջիցը դէպի արեւելք ու արեւմուտք. Խիստ մեծ ձոր կլինի, եւ սարի կէսը կքաշուի դէպի հիւսիս, եւ կէսը՝ դէպի հարաւ: ⁵ ...Եւ պիտի գա իմ Տէր Աստուածը բոլոր սուրբերը քեզ հետ:

Յարավային վարկած

The Hulda Gates: According to the Mishna, difference in heights between the Hulda Gates and the Holy of Holies was approximately 10 meters, with about 39° between the entrance to the Temple Mount and the level of the Temple.



Նախապատմություն

70թ. ՔՀ. Երուսաղեմի անկումը

132թ. ՔՀ. Բար Քոչբան ապստամբում է

135թ. ՔՀ. Հռոմեացիները հետ են գրավում Երուսաղեմը

- Էլիա Կապիտոլինան է կառուցվում քաղաքի ավերակների վրա
- Յուպիտերին նվիրված տաճարն է կառուցվում հրեական տաճարի տարածքում:
- Հաղրիանի ձիավոր արձանը դրվեց Սրբությունների սրբության վրա:

Երեք հավանական տարբերակներ. միայն հնեաբանական խորը հետազոտությունները կլուծեն սա: WAQF-ի (Հորդանանի Բարձրագույն Խրոհրդի) ագրեսիվ փորձերը՝ վերացնելու հրեական պատմական ներկայության ապացույցները, մեծ չափերով կործանելով պատմական հուշակոթողները: Ժամանակը ցույց կտա...

3) Եվ Իմ երկու վկաներին գորություն եմ տալու, և նրանք քուրձ հագած, մարգարեություն են անելու հազար երկու հարյուր վաթսուն օր:

«**Իմ երկու վկաները**». ընդգծված կառուցվածք: Հետոն միայն երկու հոգի ուղարկեց լրտեսելու (հ. 12, Մովսեսի կողմից 40 տարի առաջ):

Երկու. օրենքով պահանջված վկաների թիվը (Բ Օր. 17:6, Մաթ. 18:16): (Նշում. միշտ երկու հրեշտակներ. հարությունից հետո, համաբարձման ժամանակ, Ծննդ. 18 և այլն): Այս մարդիկ հատկապես կոչվում են մարգարեներ (հ. 3,6) Հին Կտակարանի տեսակետից, նրանք հրաշքներ են գործում:

«**Քուրձ**». ավելի շուտ խոսում է օրենքի, քան թե շնորհի մասին, ապաշխարություն: Այստեղ ամեն բան խոսում է Հին Կտակարանի մասին:

4) Սրանք այն երկու ձիթենիներն ու երկու աշտանակներն են, որ երկրի Աստծո առջև են կանգնում: 5) Եվ եթե որևէ մեկն ուզենա նրանց փաստա տալ, նրանց բերաններից կրակ դուրս կգա ու կուլ կտա նրանց թշնամիներին. և եթե որևէ մեկն ուզենա նրանց փաստա տալ, նա այսպես պետք է սպանվի: 6) Սրանք **երկինքը փակելու** իշխանություն ունեն, որպեսզի իրենց մարգարեությունների օրերին անձրև չգա, ու նաև **ջրերն արյուն** դարձնելու իշխանություն ունեն և՛ ամեն տեսակի պատուհասներով երկրին խփելու, քանի անգամ որ կամենան:

Ինքնություններ

- 3-ն էին ակնկալվում (Հովհ. 1:20,21). **Մեսիան** (Մադ. 3:1-3,5,6), **Եղիան** (Մադ. 4:5,6) և **Մովսեսը** (Բ Օր. 18:15-19):

Յով. 1:20-21 - 20 Եւ նա խոստովանեց եւ չուրացավ. եւ խոստովանեց, թէ՛ Ես չեմ Քրիստոսը: 21 Եւ նորան հարցրին. Ապա ո՞վ, Եղիա՞ն ես. եւ նա ասեց. Չեմ. Մարգարէ՞ն ես դու. եւ նա պատասխանեց, Ոչ:

- Հովհաննես Մկրտիչը. «Ես չեմ»: Հովհ. 1:19,20, Մաթ. 11:14, 17:10-11: Նա չկարողացավ «որդիների սրտերը հայրերին դարձնել», ինչպես Մաղաքիան էր մարգարեացել, ոչ էլ ներկայացնել «մեծ և անեղ օրը» և այլն:

Ես. 61:1-2 1 Տէր Եհովայի հոգին ինձ վերա է, ըստ որում Տէրը օժել է ինձ. նա ուղարկել է ինձ աղքատներին ավետարանելու, կոտրած սիրտ ունեցողներին բժշկելու, գերիներին ազատութիւն հրատարակելու եւ կապեալներին՝ արձակում. 2 Տիրոջ համար հրատարակելու ընդունելի տարին, **եւ վրէժխնդրության օրը՝ մեր Աստուծո համար.**

Ղուկ. 4:17-19 17 Եւ Եսայիա մարգարէի գիրքը տուին նորան. եւ երբոր գիրքը բացեց՝ այն տեղը գտաւ, ուր գրուած էր. 18 Տիրոջ Հոգին ինձ վերայ է. որի համար էլ օժեց ինձ. նա ինձ ուղարկել է աղքատներին ավետարանելու, սրտով կոտրուածներին բժշկելու, 19 Գերիներին թողութիւն քարոզելու, եւ կույրերին տեսութիւն. խոցուածներին արձակելու ազատելով, Տիրոջ ընդունելի տարին քարոզելու:

- Երկու ծառայություններն անավարտ էին. Մովսեսը (Թվ. 20:12, Բ Օր. 3:26-28) և Եղիան (Գ Թագ. 17:1, 19:13-16, Դ Թագ. 2:11):

Եզակի գորություններ

- **Եղիա.** երկնքից կրակ իջեցնել (Գ Թագ. 18:37, Դ Թագ. 1:10,12, Եր. 5:14), երկինքը փակել (Գ Թագ. 17:1, 3 ու կես տարի: Ղուկ. 4:25, Հակ. 5:17,18): Եկեղեցու ծառայողները պետք է անփսաս լինեն. Փիլ. 2:15, Հռոմ. 16:19: Հակոբոսն ու Հովհաննեսը ուզում էին կրկնել Եղիայի քայլը, սակայն Հիսուսը հանդիմանեց նրանց (Ղուկ. 9:54-56):
- **Մովսես.** ջուրը արյուն դարձնել (Ել. 7:19,20), պատուհաստներ (Ել. 8-12):

Այլընտրանքներ

- **Ենճվքը.** «Մարդկանց համար սահմանված է մեկ անգամ մեռնել...» (Եբր. 9:27). բնական կարգ, բացառություններ. Ղազարոս, Հայրոսի դուստրը, Նայինի որբնայրու որդին և այլն: Վկաները հրաներ են:
- Արդյոք Ենճվքը Հափշտակության մոդելն է:
- Հովհաննէ՞սը, առաքյալը (և գրողը):
- Հովհաննէս Մկրտի՞չը:

Երկու վկաներն իշխանություն ունեն

- Երկնքից կրակ իջեցնել. Եղիա՞
- Երկինքը փակել. Եղիա՞
- Ջուրը արյուն դարձնել. Մովսէ՞ս
- Երկիրը հարվածել պատուհասներ. Մովսէ՞ս

Երկու վկաները

- **Վերափոխում.** Մաթ. 17:3

Եւ ահա երեւեցան նորանց **Մովսէսը** եւ **Եղիան**, որ նորա հետ խօսում էին:

- **Չարություն.** Ղուկ. 24:4-7

4 Եւ եղաւ երբոր նորա համար շատ հիացել էին, ահա **երկու մարդ** հասան նորանց լուսավոր հանդերձներով: 5 Եւ երբոր նորանք ահով լցվեցին, եւ իրենց երեսները դէպի երկիր խոնարհեցրին, նորանց ասեցին. Ի՞նչ էք կենդանին մեռելների մէջ որոնում: 6 Այստեղ չէ, այլ հարություն առավ. հիշեցէք ինչպէս նա ձեզ հետ խօսեց, երբոր Գալիլէայում էր. 7 Որ ասում էր, թէ պէտք է մարդի Որդին մեղավոր մարդկանց ձեռը մատնուի՝ եւ խաչուի եւ երրորդ օրը հարություն առնի:

- **Չամբարձում.** Գործք. 1:9-11

9 Եւ երբոր այս ասեց, նորանք նայելիս՝ վերացավ (հափշտակվեց). Եւ մի ամպ վեր առավ նորան նորանց աչքերից: 10 Եւ դեռ որ նորանք աչքերը ուղղած մտիկ էին տալիս դէպի երկինք նորա գնալին, ահա **երկու մարդիկ** երեւեցան նորանց սպիտակ հանդերձներով, 11 Որ եւ ասեցին. Ով Գալիլէացի մարդիկ, ի՞նչ էք կանգնել եւ մտիկ էք անում դէպի երկինք. Այս Հիսուսը, որ ձեզանից վերացավ երկինք, այսպէս կ'գա ինչպէս նորան տեսաք երկինք գնալիս:

7) Ու երբ կատարեն իրենց վկայությունը, այն ժամանակ անդունդից ելած գազանը նրանց հետ պատերազմելու է և հաղթելու է նրանց ու սպանելու է:

8) Եվ նրանց մարմիններն ընկած փալու են **մեծ քաղաքի հրապարակում**, որ հեզևորապես **Սողոմ է** կոչվում ու **Եգիպտոս**, որտեղ մեր Տերն էլ խաչվեց:

Երուսաղեմ = «Սողոմ» (Ես. 1:9,10, 3:8,9, Եր. 23:14, Բ Օր. 32:30-33) = «Եգիպտոս» Եզեկ. 23:3,4,8,19):

Ես. 1:9 - 9 Եթէ որ Զօրաց Տէրը մեզ համար մի քիչ **մնացորդ չթողէր**, Սողոմի պէս կլինէինք, Գոմորին կնմանէինք: ¹⁰ Լսեցէք Տիրոջ խօսքը, ով Սողոմի իշխաններ, ականջ դրէք մեր Աստուծո օրէնքին, ով Գոմորի ժողովուրդ:

Ես. 3:8-9 - 8 Որովհետեւ Երուսաղէմը սասանուել է եւ Հուդան՝ ընկել. Որովհետեւ նորանց լեզուներն ու գործերը Տիրոջ դէմ է, որ հակառակէն նորա փառաց աչքերին: ⁹ նորանց երեսի տեսքը վկայում է իրանց դէմ. եւ իրենց մեղքերը հրատարակում են Սողոմի պէս, չեն ծածկում. վա՛յ նորանց անձին, որ իրանց չարիք են հատուցանում:

Նրանք անխոցելի են մինչև իրենց վկայությունն ավարտելը: (Նմանապես դու): (Մովսէսի ու Եղիայի նախկին ծառայություններն ընդհատվել էին): Հիմա հակաքրիստոսն է իշխանության եկել (առաջին հիշատակումը): Նկատեք գազանի ծագումը: Եվ նկատեք, որ նա կարող է հաղթել նրանց. ի հակասություն Եկեղեցու (Մաթ. 16:18): Նրա մասին ավելի շատ 13-րդ գլխում (13:7,15):

9) Եվ ժողովուրդներից ու ցեղերից և լեզուներից ու ազգերից շատերը **տեսնելու են** նրանց դիերը երեք ու կես օր, ու թույլ չեն տալու, որ նրանց դիերը գերեզմաններում թաղվեն: 10) Եվ նրանք, որ երկրի վրա են բնակվում պիտի ուրախանան նրանց մահվան համար և տոնելու են, մինչև անգամ միմյանց ընծաներ են ուղարկելու, որովհետև այս երկու մարգարեները երկրի բնակիչներին չարչարեցին:

Միակ տոնակատարությունը երկրի վրա Հայտնության գրքում:

11) Եվ երեք ու կես օր անց Աստուծոց կենդանության Հոգին նրանց մեջ մտավ, ու նրանք կանգնեցին իրենց ոտքերի վրա և նրանց **տեսնողների** վրա մեծ վախ ընկավ: 12) Ու երկնքից լսեցին մի հզոր ձայն, որ նրանց ասում էր. «Վե՛ր կացեք, **եւէք այստեղ**»: Եվ նրանք ամպի միջով երկինք բարձրացան, ու նրանց թշնամիները տեսան նրանց:

CNN-ի կողմից բացառիկ հաղորդում: (Նույնը, ինչ Մաթ. 24:15): Հայտ. 4:1:

13) Եվ նույն ժամին մեծ երկրաշարժ եղավ, ու կործանվեց քաղաքի մեկ տասերորդ մասը, և այդ երկրաշարժից յոթ հազար մարդ մեռավ, իսկ մնացածները վախով լցվեցին ու փառք տվին երկնքի Աստծուն: 14) **Երկրորդ վայն անցավ.** ահա շուտով կգա երրորդ վայր:

Մեծ երկրաշարժ տեղի ունեցավ, երբ 6-րդ կնիքը բացվեց (6:12), մեկ ուրիշ մեծ երկրաշարժ, երբ 7-րդ թասը դատարկվեց (16:18-20): «Տասերորդ». հայտնապես հայտարարված է, որ տասերորդ մասը Տիրոջն է պատկանում. Ղևտ. 27:30-34:

«Յոթ հազար մարդ մահացավ երկրաշարժից»: (Նույն թվով մարդկանց մասին Եղիան անտեղյակ էր. Գ Թագ. 19:18: (Գ Թագ. 20:15): Սա ավարտում է անուղղակի բաժինը 6-րդ և 7-րդ փողերի միջև: Բացում է Յոթ Անահատականությունների մասին 12 և 13 գլուխներում: Այս բոլորը «2-րդ վայն» մասն էր կազմում: 3-րդ վայր (Դատաստանի 7-րդ փողը) կբերի Դատաստանի Յոթ Թասերը:

15) **Ու յոթերորդ հրեշտակը** հնչեցրեց փողը, ու երկնքում բարձր ձայներ էին լսվում, որ ասում էին. «Այս աշխարհի թագավորությունները դարձան մեր Տիրոջն ու Նրա Օծյալինը, և Նա թագավորելու է հավիտյանս հավիտենից»:

Սատանան տիրում է աշխարհի վրա (Մաթ. 4:8-9, 12:26, Հովհ. 12:31, 14:30, 16:11): Հաղթության հռչակում: Սատանան կարճ ճանապարհ էր առաջարկում (Մաթ. 4:8-9): Հիսուսը վարվեց Հոր ուզած ձևով: (Նկատեք, որ սա հրեշտակի փողն է, ոչ թե «Աստծո փողը», որը տեղի է ունենում Սինայում (Ել. 19) և հափշտակության ժամանակ (Ա Թեսաղ. 4:16,17): Յոթերորդ հրեշտակը բարկության յոթ թասերի սկիզբն է ներկայացնում):

16) Եվ քսանչորս երեցները, որ նստած էին Աստծո առջև՝ իրենց աթոռների վրա, ընկան երեսնիվայր և Աստծուն երկրպագեցին՝ ասելով: 17) «Քեզ գոհություն ենք մատուցում, Ո՛վ Ամենակալ Տեր Աստված, որ ես, և էիր և գալու ես. որ Քո մեծ գորությունը վերցրիր ու թագավորեցիր»:

Փառաբանության եռապատիկ հռչակում (11:16-18): Քրիստոսը կատարելապես իշխում է (հ. 17): Նա արդարությամբ է իշխում (հ. 18): Նա առատաձեռնությամբ վարձատրում է (հ. 18): Հայտ. 4:10-11, երեցները երկրպագում են Արարչին, 5:9-14-ում նրանք երկրպագում են Փրկչին, այստեղ շեշտը Հաղթողի ու Թագավորի վրա է:

(«Դու սկսում ես թագավորել» ավելի ճշգրիտ է):

18) Եվ ազգերը բարկացան, ու եկավ Քո բարկությունը, ու եկավ ժամանակը, որ մեռելները դատվեն ու վարձ տաս Քո ծառաներին՝ մարգարեներին ու սրբերին ու Քո անունից վախեցողներին, փոքրերին ու մեծերին. և կործանես նրանց, որ կործանում են երկիրը:

Նրանք ուզում են մի կողմ նետել բոլոր սահմանափակումները: Աստված թույլ կտա, որ նրանք դա անեն: Նրանց «ուտոպիայի» արդյունքը Հայտ. 17-18-ն է: Նրանց բարկությունը նրանց տանում է Արմազեդոնի:

«Բարկության ժամանակը եկել է». «Բարկություն»-ը «զայրույթ» բառի հոմանիշն է: Միայն 70-րդ շաբաթվա վերջին կեսը կներկայացնի Աստծո բարկությունը (11:18, 14:10, 16:19, 19:15): Երկու հունարեն բառերն են օգտագործված. orge, օգտագործված է այստեղ (4 անգամ) գրգռվածություն, զայրույթի հստակ վերաբերմունք, և thumos (7 անգամ. 14:10,19, 15:1,7, 16:1,19, 19:15). «ջլագրգություն, պոռթկուն բարկություն»: Աստծո բարկությունն անզգացմունքային չէ, քանի որ Նա ասում է մեղքը և սիրում է արդարությունն ու արդարադատությունը.

19) Ու երկնքում բացվեց Աստծո տաճարը, ու Նրա ուխտի տապանակն Իր տաճարի մեջ երևաց. ու եղան փայլակներ, ձայներ, որոտումներ, երկրաշարժ ու խոշոր կարկուտ:

«Տապանակի» բնօրինակը միշտ այնտեղ է եղել. երկրի վրայինն ընդամենը կրկնօրինակն էր (Եբր. 9:23): Որոշ մարդկանց տեսակետից, Շնորհաց աթոռը հենց այն գահն է, որի վրա Քրիստոսն է թագավորելու:

Յոթ մեծ բացումներ

- Երկնքում դուռ է բացվում. Հայտ. 4:1
- Կնիքներն են բացվում. Հայտ. 6:1-8:1
- Անդունդն է բացվում. Հայտ. 9:2
- Աստծո տաճարն է բացվում. Հայտ. 11:19
- Վկայության խորանն է բացվում. Հայտ. 15:5
- Երկինքն է բացվում. Հայտ. 19:11
- Դատաստանի գրքերն են բացվում. Հայտ. 20:12

Չաջորդ դասը

Կարդացեք Հայտնություն 12-ը, Աստվածաշնչի ամենառազմավարական ամփոփումներից մեկը: Ո՞վ է 12-րդ գլխի «Կինը»: Ինչպե՞ս է այս գլխուն ազդում մեր տեսակետերի վրա այսօր: